600.0083.25.11.02

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 նոյեմբերի 2002 թվականի N83Ն
քաղ.Երևան

ՓՈՔՐ ՀԻԴՐՈԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆՆԵՐԻՑ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ (ՀԶՈՐՈՒԹՅԱՆ) ԳՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին կետի ե) և թ), 59-րդ հոդվածի 1-ին կետի ա) և գ) ենթակետերը, հաշվի առնելով տեղական հիդրոէներգետիկական պաշարների առավել արդյունավետ օգտագործման անհրաժեշտությունը՝ Հայաստանի Հանրապետության էներգետիկայի կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. 2002 և 2003 թվականների համար փոքր հիդրոէլեկտրակայաններից առաքվող էլեկտրական էներգիայի (հզորության) քվոտաները սահմանել տարեկան փաստացի առաքված էլեկտրաէներգիայի (հզորության) քանակին հավասար:
2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի 2001 թվականի նոյեմբերի 12-ի «Փոքր ՀԷԿ-երից էլեկտրական էներգիայի առաքման 2002 թվականի քվոտաները սահմանելու մասին» N 56 որոշումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Վ. ՄՈՎՍԵՍՅԱՆ**

ք.Երևան
25 նոյեմբերի 2002թ.